

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մակագրութեամբ յանձնուեց ի տնօրէնութիւն ս. Էջմիածնի Սինոդին ս. Երուսաղէմի Պատրիարքական Տեղապահի յայտարարութիւնը և նրան կցած թ. 464 հաւատարմաթուղթը՝ Սերեբրեննիկեան կտակագումարի տոկոսները ստանալու և բաշ պատկաններին հասցնելու մասին։ 2 յունուարի թ. 2241։

Առաջարկուեց ս. Էջմիածնի ս. Սինոդին վաղեմի սովորութեան համեմատ ուղարկել Մայր Աթոռի գանձարանից, որպէս նպաստ, մի հարիւր րուբլի Կ. Պոլսի Պատրիարքարանի ձեռքով, ս. Փրկչի Ազգային հիւանդանոցին։ 7 յունուարի թ. 2243։

Առաջարկուեց Թիֆլիզի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսին ս. Աւետման Աստուածածնի տօնի օրը հոգեհանգիստ կատարել, պատարագից

յետոյ, Եսայի Աբովեանի որդու դերեզմանի վրայ, որ իւր ծախքով Օձուն գիւղի համար դպրոցական շէնք է կառուցել։ 10 յունվ. թ. 2253։

Առաջադրութեամբ հաստատուեց Մայր Աթոռի պաշտօնական «Արարատ» ամսագրի ամբողջ կազմը։ 13 յունուարի թ. 2257։

Առաջադրուեց ս. Էջմիածնի Սինոդին տալ նախահաշուով որոշուած «Արարատ» ամսագրի ծախքերը և աշխատակիցների վարձագները։ 13 յունուարի. թ. 2258։

Առաջադրուեց Մայր Աթոռի Վանական Կառավարութեան անդամ Տ. Խորէն վարդապետ Լազարեանին կազմել և ներկայացնել ի տես՝ ս. Էջմիածնի 1913 թ. օրացոյցը։ 18 յունուարի թ. 2265։

Առաջադրութիւն Ատրպատականի Առաջնորդ Տ. Կարապետ Եպիսկոպոսի անունով, որի հետ ուղարկուեց Ղարադաղցիների խնդիրը և պատուիրուեց հոգ տանել, որպէս զի կարողանան անդորր և անվտանգ ապրել։ յունուարի թ. 2268։

Մակագրութեամբ ուղարկուեց ս. Էջմիածնի Սինոդին Կ. Պոլսի Պատրիարքի 11 յունուարի թ. 78 գրութիւնը, որով յայտնում է, թէ ստացուած է Սինոդի ուղարկած Կիլիկիայի որբերի օգտին 100 ռուբլի նպաստը։ 27 յունուարի թ. 2278։

Առաջադրուեց Երևանի փոխ-թեմակալին ի գիտութիւն, թէ հայոց եկեղեցական-ծխական դպրոցները կառավարում են 1905 թ. հաստատած բարձրագոյն կանոններով։ 20 յունուարի թ. 2280։

Առաջադրուեց Մայր Աթոռի Տպարանի վարչութեան ուղարկել Կ. Պոլսի Պատրիարքարանի միջոցով Անտիոքայ թաղական ժողովին 1912 թ. «Արարատը», «Յիսուսի վերջին շաբաթը» և այլ գրքեր։ 31 յունուարի թ. 2284։